**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

# ՈՐՈՇՈՒՄ

<< 23 >> << ապրիլի >> 2020թ. N ՄՊ/129-2020

ք. Արմավիր

### *ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2020 թվականի ապրիլի 21-ի NՄՊ/128-2020 որոշումը, <<Արմավիրի Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունում հանձնման-ընդունման աշխատանքներն իրականացնելու նպատակով.

***որոշում եմ՝***

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Հ. Հարությունյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել <<Արմավիրի Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության հաշվապահ Գարիկ Չիլինգարյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Հ. Հարությունյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 10 աշխատանքային օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*ՄԱՐԶՊԵՏ՝* *Հ. ՄԱԹևՎՈՍՅԱՆ*

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 23.04.2020 12:53:59 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի*
*2020 թվականի ապրիլի 23-ի*
*N ՄՈ/129-2020 որոշման*

## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

*Հանձնաժողովի նախագահ՝*

Հ. Հարությունյան - ՀՀ Արմավիրի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ.

*Անդամներ՝*

Ա. Դանիելյան - ՀՀ Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ.

Ա. Բեգլարյան - ՀՀ Արմավիրի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ.

Ա. Մուրադյան - ՀՀ Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի ավագ մասնագետի պաշտոնակատար.

*Խորհրդակցական ձայնի իրավունքով՝* Ա. Հակոբյան - ՀՀ Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ:

*Հանձնող՝* Ս. Բարեղամյան (նախկին ժամանակավոր պաշտոնակատար).

*Ընդունող՝* Հ. Զուռնաչյան (ժամանակավոր պաշտոնակատար):

*Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝* *Վ. Վարդազարյան*

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 23.04.2020 12:33:26 GMT+4

Подписано: VARDAZARYAN VARDAN 1704780217